

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԿԱՋՄԱԿԵՐՊԱԾ ՖՐԻԴՀՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԸ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Նյու Յորք

Բարձր գնահատանքով կողջունենք Ձեր կազմակերպած հանդիսությունը ի պանծացումն հայ ազգի մեծ բարերար Ֆրիդհոֆ Նանսենի, նրա ծննդյան 125-ամյակի առթիվ:

Բարեպաշտ ու մարդասեր մեծ վավակը Նորվեգիայի աստվածասեր ժողովրդի իր արդար ու հզոր ձայնով և իր կյանքի ողջ գործունեությամբ հանդիսացավ մեծ վկան 1915 թվականի հայոց ցեղասպանության ողբերգության ու նաև մեծ մխիթարիչը և հոգատար հրեշտակը մահվան ճիրաններից ազատած անտուն և անտեր վերապրողների, հայ գաղթականների, որոնք առաջին համաշխարհային պատերազմից հետո ապաստան գտան շատ երկիրների մեջ շնորհիվ Ֆրիդհոֆ Նանսենի անդուլ ջանքերի միջազգային մակարդակի վրա, որով ապահովվեց բազմահազար հայ գաղթականների բնակության իրավունքը աշխարհի տարբեր երկրներում:

Հայ Եկեղեցին ու ժողովուրդը հավետ պայծառ կպահեն հիշատակը իրենց մեծ բարերար Ֆրիդհոֆ Նանսենին:

Սուրբ Էջմիածնից օրհնություն նրա կյանքին ու նրա մարդասեր առաքելության:

Լույս և խաղաղություն նրա արդար հոգվույն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 ապրիլ 1986 թ.